



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշենի համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.
Հայկաշեն, haykashen.armavir@mta.gov.am,
Հեռ. 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

N 130
14 դեկտեմբերի 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Մեծարգո մարզպետ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 9 հերթական նիստի որոշումները:

Առդիր 14 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վարչամ Հովհաննիսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 26

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N 9 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՇԱՀԵՆ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





Արմավիրի մարզի Հայկազեն համայնքի
ավագանու N 12, 2020 թ. N 9 հրոչման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկազեն համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 11-ի N-9 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

Ձեկ. Վ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկազեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Ձեկ. Վ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկազեն համայնքի համայնքապետարանի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը հաստատելու մասին:

Ձեկ. Վ. Հովհաննիսյան

4. Արմավիրի մարզի Հայկազեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

Ձեկ. Վ. Հովհաննիսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477860300, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 27-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղքատության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Տեղական տուրքերի դրույքաչափերը հաշվարկելու համար կիրառել 0.5 գործակից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի մեկից:

Կողմ -5

Դեմ -0

Չեղնակալի -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԾԱՀԵՆ

ՍԵՐՈՐՔՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐՇԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հայաստանի Հանրապետության Արևմտյան
Մարզի Հայկաշեն համայնքի ամսագանու
N 27-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎՈՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱԿՆՏԻ ԿԱՐԶԱԿԱՆ
ՏԱՐԱԾՐՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐԸ

Գ Լ ՈՒ Խ 1

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶՈՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղագրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության բույսավորյուն չպահանջող դեպքերի) բույսավորյուն համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությունով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

2) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և

շինությունների համար՝ երկու հազար դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում գույության ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության բույսավորյուն չպահանջող դեպքերի) բույսավորյուն համար. էթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառուցների, վերնակառուցների, շենքի զարբախտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնային) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ հազար հինգհարյուր դրամ:

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաշափայլին չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի զարարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանգման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երեք հազար դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված քնայան կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված քնայան կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուց հազար դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուս հազար դրամ:

7. Ոգելից և ակոնոդային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,

5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,

6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ:

8. Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,

2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,

3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ութ հազար դրամ,

4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար դրամ,

5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ:

6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քանակինգ հազար հազար դրամ:

9. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում, Առևտրի և ծառայությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ հարյուր դրամ մեկ քառակուսի մետրի համար:

10. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակխազերի կազմակերպման օբյեկտներին, խաղասենյակի և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային

տարվա համար

1) առևտրի օբյեկտների համար՝ քանակինգ հազար դրամ,

11. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի

վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ էրեք հազար դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ էրեք հարյուր դրամ,

6) էքսե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ հարյուր հիսուն դրամ:

12. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ էրթուղային տարախների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ:

13. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

14. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար հիսուն հազար դրամ:

15. Սահմանված դրույքաչափերը համայնքի ավագանու որոշմամբ հաշվարկվել է 0.5 գործակիցի կիրառմամբ:

16. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասնհինգ հազար ՀՀ դրամ:

17. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվության պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար ՀՀ դրամ:

18. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ:

19. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար ՀՀ դրամ:

20. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար ՀՀ դրամ:

21. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝

- 1) ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ:
- 2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ Լրկու հազար ՀՀ դրամ,
- 3) հասարակական և արտադրական նշանակության օբյեկտներից՝ ըստ շենքերի և շինությունների մակերեսի՝
 - ա. մինչև 20 քառակուսի մետր ներառյալ՝ հինգ հարյուր ՀՀ դրամ,
 - բ. մինչև 50 քառակուսի մետր ներառյալ՝ հազար ՀՀ դրամ,
 - գ. մինչև 100 քառակուսի մետր ներառյալ՝ հազար հինգ հարյուր ՀՀ դրամ,
 - դ. 100 քառակուսի մետրից մինչև 500 քառակուսի մետրը՝ երեք հազար ՀՀ դրամ,
 - ե. 500 քառակուսի մետրից ավել հինգ հազար ՀՀ դրամ:

22. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ մեկ հազար ՀՀ դրամ:

23. Համայնքային ենթակառուցվածքի մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ վեց հազար ՀՀ դրամ:

24. Համայնքի բնակիչ համարվող անձանց՝ վարորդական իրավունք ստանալու, աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու, նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների ավանդներ ու փոստային առաքումներ (այդ թվում՝ գրամական և ծանրացային) ստանալու լիազորագիրը հաստատելու համար՝ մեկ հազար ՀՀ դրամ:

25. Համայնքի բնակիչ համարվող անձանց կրակը վավերացնելու համար՝ հինգ հազար ՀՀ դրամ:

26. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր ՀՀ դրամ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության
Իրավական ակտերի փորձաքննության գործակալության կողմից 2020 թվականի
դեկտեմբերի 10-ին ներկայացրած պետական փորձագիտական եզրակացության
պահանջները կատարված են:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԳ



ՎԱՐՇԱՄ ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հծ՝ 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 06/27 / 27353-2020
«10» փետրվարի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՎԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 114 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

Invalid signature

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագծի վերնագրից առաջ և նախագծի վերջում նշված «նոյեմբերի 16» և «2020 թվականի նոյեմբերի 16 գ. Հայկաշեն» բառերն անհրաժեշտ է հանել:

2. Նախագծի և նախագծով հաստատվող հավելվածի վերնագրերում, ինչպես նաև 1-ին կետում անհրաժեշտ է ճիշտ նշել նախատեսված տարեթիվը, մասնավորապես՝ «2020», և «2019» թվերն անհրաժեշտ է փոխարինել «2021» թվով՝ նկատի ունենալով, որ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի վարչական տարածքում **2021** թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

3. Նախագծի նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 14-րդ հոդվածներին, ինչպես նաև «Աղքատիության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 14-րդ հոդվածին՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

4. Նախագծի 2-րդ կետում «պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2021 թվականի հունվարի մեկից» բառերով: Սույն դիտողությունը թխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի պահանջներից:

5. Նախագծով հաստատվող հավելվածի (այսուհետ՝ Հավելված) վերևի աջ անկյունում անհրաժեշտ է հանել «13.11.2020թ» և «նախագիծ» բառերը:

6. Հավելվածի վերնագրից անհրաժեշտ է հանել «տեսակներն ու» բառերը՝ նկատի ունենալով նախագծի վերնագրի և 1-ին կետի պահանջները: Սույն դիտողությունը թխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներից:

7. Հավելվածի 8-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել և համապատասխանեցնել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի կարգավորումներին, մասնավորապես՝ «Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար» բառերով: Սույն դիտողությունը բխում է «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքի պահանջներից:

**Իրավական ակտերի փորձաքննության
գործակալություն**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 28

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական իրնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնական դրույքաչափերը համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՐՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԾԱԿԵՆ

ՍԵՐՈՐՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԱՐՄԱԿԻՐԻ ԱՄՐՁԻ ՀԱՅԿԱՇԵՆ
 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 28 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ԱՄՐՁԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

h/h	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափ
1	Համայնքի ղեկավար	1	260000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	200000
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ			
1	Աշխատակազմի քարտուղար	1	180000
2	Առաջատար մասնագետ	2	130000
3	Առաջին կարգի մասնագետ	1	95000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ			
1	Գործավար օպերատոր	1	95000
2	Քարտուղարուհի	1	90000
3	Հավաքարար	1	90000
4	Անասնաբույժ	0.5	45000
5	Պահակ	1	90000
			ԸՆԴԱՄԵՆՆՆԸ
			1405000
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲԱԺԻՆ			
1	Գրադարանի վարիչ	1	95000
			ԸՆԴԱՄԵՆՆՆԸ
			95000
ԸՆԴԱՄԵՆԸ			1500000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 29

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 11-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ ամսական 260.0 հազար ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ մտնում ընդունման պահից:

Կողմ -5

Դեմ -0

Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ԾԱԿԵՆ

ՍԵՐՈՔՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՎԱՐՇԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

